*Ձոն*

*Բանաստեղծություն նվիրված ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտին*

*Հպարտության խորհրդանիշ*

Երևանի սրտում մի կաճառ կա,
Տնտեսագիտության ինստիտուտ են անվանում նրան,
Մարդիկ աշխատում են այստեղ մեծ եռանդով,
Հարթում են մեր պայծառ ուղին ու ապագան:

Հպարտ քայլում ենք դեպի ինստիտուտ,
Ուր սպասում են մեզ անհամբեր,
Հզոր, ուժեղ ու բանիմաց,
Գիտնականները մեր փառահեղ:

Այստեղ է Սուվարյանը՝ մեր ակադեմիկոսը,
Այստեղ է Սարինյանը՝ մեծ գիտնականը,
Այստեղ է Վահանյանը՝ պրոֆեսորը մեր հարգարժան,
Այստեղ է հիշողությունը, ինստիտուտի ողջ անձնակազմը:

Հարությունյանի անունն է այստեղ թևածում,
Մարդկանց շուրթերին ամենուր,
Հարգում են, սիրում, մեծարում նրան,
Քանզի արժանի է նա այդ հարգանքին:

Պարտավորեցնող է անունը տնտեսագետի,
Սովորեցնում է լինել բարի, հայրենասեր,
Եվ միշտ հպարտ ու ժպտերես,
Կատարած աշխատանքներով և փառահեղ մեր անցյալով:

Տնտեսագետների սերունդն ենք մենք,
Պատվով կրենք այն միասին,
Եվ միշտ հիշենք անունն ինստիտուտի,
Որպես հպարտության ու հաջողության խորհրդանիշ:

19.10.2020թ. Ստեփան Պապիկյան
ք.Երևան Հայկական էներգետիկական ակադամիայի հիմնադիր նախագահ, բազմաթիվ ակադեմիաների իսկական անդամ, Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր, բանաստեղծ, գրող, հրապարակախոս, հասարակական ակտիվ գործիչ